ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-153

№ 28.7/211-2020
«10» 01 2020 թ.

Ք.ԵՐԵՎԱՆ, ԲԵԼԻՆՍԿՈՒ 2
ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼԵՆՑԻՆ

Հարգելի պարոն Գալենց,

ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված Ձեր 09.12.2019թ.-ի թիվ Մ/51507-2019 դիմումի կապակցությամբ հայտնում ենք, որ «Նոտարիատի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն, եթե հնարավոր չէ ժառանգության զանգվածի պահպանության ուղղությամբ միջոցներ ձեռնարկել (ժառանգատուի հետ ապրող ժառանգները կամ այլ անձինք առարկում են գույքագրման դեմ, ժառանգության զանգվածը գույքագրման չեն ներկայացնում, կամ այն դուրս է հանված և այլն), ապա նոտարը կազմում է համապատասխան արձանագրություն և այդ մասին հայտնում է շահագրգիռ անձանց և նոտարական պալատ:

Վերոգրյալից ելնելով հայտնում ենք, որ նոտարի գործողությունները բխում են օրենքի պահանջներից:

Դատական գործերի քննության ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ Ձեր դիմումի կապակցությամբ հայտնում ենք, որ ներկայացված պահանջի քննությունը դուրս է ՀՀ արդարադատության նախարարության իրավասությունից:

Մասնավորապես՝ Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է:

Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Միաժամանակ Ձեր դիմումի ուսումնասիրությունն իրականացնելով ՀՀ արդարադատության նախարարին վերապահված՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասության սահմաններում՝ պարզվել է հետևյալը.

Համաձայն Ձեր դիմումի և «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքում առկա տեղեկատվության՝

- Թիվ ԵԴ/16656/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 22.01.2019թ.-ին կայացվել է որոշում գործի վարույթը մինչև թիվ ԵԴ/23298/02/18 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը կասեցնելու վերաբերյալ:

- Թիվ ԵԴ/23298/02/18 քաղաքացիական գործը գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Է. Ամալյան) վարույթում:

- Թիվ ԵԴ/33685/02/19 քաղաքացիական գործը գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Տաշչյան) վարույթում:

- Թիվ ԵԴ/0745/11/19 դատական գործը գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում:

- Թիվ ԵԴ/0123/11/19 դատական գործով ներկայացվել է վերաքնիչ բողոք, որը գտնվում է քննարկման փուլում:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքերով՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: Եթե խախտումը հայտնաբերվել է մինչև դատական վարույթն

ավարտվելը, ապա սույն կետով նախատեսված վեցամսյա ժամկետը հաշվարկվում է դատական վարույթն ավարտվելու պահից: (...)»:

Հիմք ընդունելով վերոնշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորումը և այն հանգամանքը, որ վերոնշյալ դատական գործերն այժմ գտնվում են դատարանների վարույթում, նշված գործերով դատավորների կողմից կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող՝ նյութական կամ դատավարական նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հարցը կարող է քննարկման առարկա դառնալ դատական վարույթի ավարտից հետո:

- Ըստ «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքում առկա տեղեկատվության՝ թիվ ԵԴ/5713/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Ստեփանյան) կողմից վճիռը կայացվել է 25.02.2019թ.-ին: Վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (դատավորներ՝ Տ. Նազարյան, Հ. Ենոքյան, Գ. Խանդանյան) 08.07.2019թ. որոշմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը (դատավորներ՝ Ռ. Հակոբյան, Տ. Պետրոսյան, Ս. Անտոնյան, Վ. Ավանեսյան, Ա. Բարսեղյան, Մ. Դրմեյան, Ե. Խունդկարյան, Գ. Հակոբյան, Ս. Միքայելյան, Է. Սեդրակյան, Ն. Տավարացյան) 18.09.2019թ. որոշմամբ վերադարձրել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.07.2019թ. որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը, իսկ 13.11.2019թ. որոշմամբ առանց քննության է թողել նույն որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը, որի արդյունքում դատական վարույթն ավարտվել է:

Օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-4-րդ մասերի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը: Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ դատարանի կամ դատավորի գործունեությանը որևէ միջամտությունը կամ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը, Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս հայտնած

կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական վարույթը իրականացվում է օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության ու խտրականության արգելքի սկզբունքների հիման վրա:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենսգրքի նույն հոդվածի 2-3-րդ մասերի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ ակնհայտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որի առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկով:

Կոպիտ է դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի այն խախտումը, որը հեղինակազրկում է դատական իշխանությունը: Կոպիտ է նաև դատավորի կողմից արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կամ դատավորի վարքագծի կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակազրկում է դատական իշխանությանը:

Հիմք ընդունելով վերոնշյալ իրավակարգավորումներն առ այն, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է նախ և առաջ դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու սկզբունքների պահպանմամբ, ի ապահովումն որի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսանում նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դատավորի

նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվում է վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ հայտնում ենք, որ դիմումում նշված փաստարկներով չի հիմնավորվում թիվ ԵԴ/5713/02/18 քաղաքացիական գործով Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի առերևույթ լինելը:

Անդրադառնալով թիվ ԵԴ/0029/11/19 դատական գործով կարգապահական վարույթ հարուցելու հարցին՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից չեն ներկայացվել նշված դատական գործով կայացված դատական ակտերը, ինչպես նաև Ձեր դիմումը չի պարունակում դատավորների կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ, դատավորի վարքագծի կանոնների կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ փաստական տվյալներ կամ հիմքեր, իսկ «11» ծածկագրով դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքում զետեղված չէ, որպիսի պայմաններում ՀՀ արդարադատության նախարարի վերոնշյալ իրավասության իրականացման պայմանները բացակայում են:

Ինչ վերաբերում է թիվ ԵԱՔԴ/4697/02/17 քաղաքացիական գործով դատական ակտ կայացված չլինելուն՝ հայտնում ենք, որ ըստ «www.datalex.am» դատական տեղեկատվական կայքում առկա տեղեկատվության՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 09.10.2019թ.-ին կայացրել է որոշում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.08.2018թ. որոշման դեմ որպես գործին մասնակից չդարձված անձ «Կալենց (Գալենց)» մշակութային հիմնադրամի անունից Լարիսա Կատասանովայի կողմից բերված վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին՝ որոշմամբ նշված թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանելով հնգօրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԷՄԻՆ ԱԲԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Արմինե Հարությունյան
ՀՀ ԱՆ վերահսկողական ծառայություն
հեռ. (010) 59-41-49